



ՎԵՐԱՆԿԱԽԱՅՄԱՆ 11ԱՄԵԱԿ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ-ԼԻԲԱՆԱՆ ԿԱՊԵՐՈՒ 10ԱՄԵԱԿ

Հայրենաբնակ հայութեան հանրաքուէով կերտուած Հայաստանի Հանրապետութեան 11ամեակը՝ 21 Սեպտեմբեր 2002ը մեկնակէտ-թուական նկատի ունեցանք նշելու՝ Հայաստան-Լիբանան պետական յարաբերություններու 10ամեակը

Հայաստան - Լիբանան պետական յարաբերություններու հաստատման տասնամեակին նուիրուած յաւելուածի սինակները նեղ եկան, ներկայացնելու համար երկու պետություններու միջեւ ստորագրուած պայմանագիրներու, փրոթոքոլային թէ աշխատանքային այցելություններու եւ տարբեր մարպերու մէջ իրագործուած ձեռնարկներու տասնամեայ հաշուեկշիռը:

Բնականաբար դժուար է պոտ պետական հայեցակէտերէ մեկնած ամբողջական տեղեկագրում ու ըստ այնմ արժեւորում կատարել տեղի ունեցած տասնամեայ գործակցութեան մասին: Կատարուածին արագ նշումն ու անոր լրագրական ներկայացումը բաւարար է գաղափար մը կապելու, յատկապէս վերջին ժամանակահատուածին, հասարակաց եզրերու վրայ կառուցուած բազմաբնոյթ գործակցություններուն մասին:

Բոլոր բնագաւառները չեն անշուշտ, որ իրենց վերաբերող պայմանագիրները յաջողած են կեանքի կոչել. այսուհանդերձ յարաբերություններու մակարդակի պատկերը, այս գաղութի իւրայատկությունն ու երկու պետություններու գործակցութեան հեռանկարային իրավիճակը կը քաջալերեն, որ պարզանան ու գործնականան բազմաբնագաւառային համաձայնությունները:

Անկասկած, որ մեր գաղութը եւս հիմնական դերակատարութիւն ունի երկու երկիրներու միջեւ ստեղծուած դիւանագիտական, մշակութային, կրթական, առեւտրական եւ այլ մարպերու մէջ սկսուած համագործակցությունը ամրապնդելու, պարզացրնելու եւ շօշափելի տուեալներով պանոնք իրականութեան վերածելու տեսակէտէն:

Ի վերջոյ նման պետական յարաբերություններու պարզացումը հիմնական ապրակ է ընդհանրապէս Հայրենիք - Սփիւռք կապերու առաւել ամրապնդման տրուած ըլլալով, որ այս պարագային խօսքը կը վերաբերի սփիւռքահայութեան հայրենիքին:

ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ՀԵՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՕՐ ԴԵՍՊԱՆ ԱՐԵԳ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՈՒՂԵՐԶԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Սիրելի հայրենակիցներ,

1991 թուականի Սեպտեմբեր 21ի համաժողովրդական հանրաքուէով Հայաստանի ժողովուրդը բացեց իր պատմութեան նոր էջը: Հաստատելով ազատութեան, անկախութեան ու ժողովրդավարութեան իր ընտրությունը՝ նա լծուեց հայոց պետականութեան վերակերտման պատասխանատու եւ դժուարին գործին: Այդ պատմական օրուանից անցեր է ընդամենը 11 տարի, եւ մենք կարող ենք հպարտութեամբ արձանագրել, որ չնայած բազմաթիւ դժուարությունների, Լեւոնային Ղարաբաղի դեռեւս չկարգաւորուած հակամարտութեանը, Հայաստանի շարունակուող շրջափակմանը, տնտեսական ճգնաժամին, 1988 թ. աւերիչ երկրաշարժի հետեւանքներին եւ բազմաթիւ այլ մարտահրաւերներին, հայ ժողովուրդը անկտրոււմ եղաւ իր ընտրութեան մէջ, վճռակամօրէն դրսեւորեց միասնութիւն եւ ունեցաւ պատմական յաղթանակներ: Հայաստանն այսօր հաստատակամօրէն ընթանում է դէպի իրաւական, ժողովրդավար պետութեան կերտում, լիարժէքօրէն մաս է կազմում ազգերի ընտանիքին:



Այս կարճ ժամանակահատուածում Հայաստանում արդէն ձեւաւորուել են անհրաժեշտ պետական կառոյցներն ու հաստատությունները, կայացել են երկրի անվտանգութիւնը երաշխաւորելու ընդունակ զինուած ուժեր, բացուել են եւ արդիւնաւէտ գործում են Հայաստանի դիւանագիտական ներկայացուցչությունները բազմաթիւ երկրներում եւ կարեւորագոյն միջազգային կազմակերպություններում:

Աստիճանաբար, սակայն, հաստատակամօրէն Հայաստանի օրէնսդրութիւնը սկսում է համապատասխանել քաղաքակիրթ երկրների չափանիշներին, սկսում են իրենց արդիւնքը տալ ընթացող տնտեսական բարեփոխումները, ստեղծում են նոր աշխատատեղեր, վերացում է «Աղէտի գօտի» հասկացութիւնը:

Սիրելի հայրենակիցներ,

Հայաստանի անկախութեան ձեռքբերումից յետոյ շատ կարճ ժամանակահատուածում հաստատուեցին դիւանագիտական յարաբերություններ Հայաստանի եւ Լիբանանի միջեւ, յաջորդաբար բացուեցին դեսպանություններ Պէյրութում, ապա նաեւ՝ Երեւանում:

2002 թ. նշանաւորում է Հայաստանի եւ Լիբանանի միջեւ դիւանագիտական յարաբերությունների հաստատման 10րդ տարեդարձով, եւ յետադարձ հայեացք դարձնելով անցած ժամանակահատուածի վրայ, տեսնում ենք, որ ընդամենը 10ամեայ պատմութիւն ունեցող միջպետական յարաբերությունները զգալի զարգացում են ապրել: Երկու պետությունների նախագահների, խորհրդարանների խօսնակների եւ վարչապետների, ինչպէս նաեւ այլ բարձրաստիճան պատուիրակությունների փոխադարձ այցելությունները վկայում են փոխադարձ գնահատանքի, վստահութեան եւ գոյութիւն ունեցող բարեկամական յարաբերությունների մասին:

Այսօր արդէն առկայ է տարբեր ոլորտներում համագործակցութեան համար անհրաժեշտ իրաւաբանական դաշտը, ինչպէս նաեւ բոլոր նախադրեալները արդիւնաւէտ փոխշահաւէտ գործակցութեան համար: Մասնաւորապէս, դեռեւս 1997 թ. Հայաստանի եւ Լիբանանի միջեւ ստորագրուել է «Բարեկամութեան եւ համագործակցութեան» մասին համաձայնագիր, որն ինքնին արդէն վկայում է գոյութիւն ունեցող յարաբերությունների բարձր մակարդակի մասին: Հայաստանը արդիւնաւէտօրէն համագործակցում է Լիբանանի հետ նաեւ ՄԱԿի եւ այլ միջազգային կազմակերպությունների շրջանակում:

Լիբանանում Հայաստանի դեսպանութեան առջեւ դրուած կարեւորագոյն խնդիրներն են ինչպէս Լիբանանի Հանրապետութեան հետ քաղաքական, տնտեսական յարաբերությունների զարգացումը, մշակութային սերտ կապերի հաստատումը, այնպէս էլ Լիբանանի հայ համայնքի հետ այնպիսի գործակցութեան ծաւալումը, որն առաջին հերթին կը խթանի երկու երկրների միջեւ յարաբերությունների էլ աւելի զարգացումն ու խորացումը, ինչպէս նաեւ կը նպաստի Հայաստան - Սփիւռք կապերի հետագայ ամրապնդմանն ու զօրացմանը:

Լիբանան, ընդհանրապէս, եւ Պէյրութը՝ մասնաւորապէս, չի դադարում նշանակալի դեր կատարել սփիւռքեան իրականութեան մէջ: Պէյրութը շարունակում է մնալ սփիւռքեան կարեւորագոյն հոգեւոր եւ քաղաքական կեդրոններից մէկը, լիբանանահայ գաղութը շարունակում է պատրաստուած, գրագէտ, մտաւորական եւ արուեստագէտ քատրերով սնուցել եւ ամրապնդել շատ գաղթօճախներ:

Սիրելի հայրենակիցներ,

Ողջունելով «Ազդակ» օրաթերթի՝ Հայաստանի անկախութեան օրուան առիթով բացառիկ թողարկում հրատարակելու նախաձեռնութիւնը, իմ եւ դեսպանութեան անձնակազմի անունից շնորհաւորում եմ Լիբանանում բնակող մեր քաղաքացիներին եւ լիբանանահայութեանը եւ մաղթում երջանկութիւն եւ բարօրութիւն:

Կեցցէ՛ Լիբանանի Հանրապետութիւնը:

Կեցցէ՛ Հայաստանի Հանրապետութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԼԻԲԱՆԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՒԵԼԻ ԱՐԳԻՒՆԱՒԵՏ ՆՈՐ ՏԱՄՆԱՄԵԱԿԻ ՄԸ ՍԵՄԻՆ

Հայաստան - Լիբանան պետական յարաբերութիւնները հազիւ տասնամեակի մը պատմութիւնը ունին եւ տակաւին կանուխ է շօշափելի արդիւնքներու եւ ցանկալի մակարդակի մասին խօսիլը: Այսուհանդերձ, երկուստեք կատարուած քայլերու շնորհիւ արձանագրուած են որոշ յաջողութիւններ եւ ստեղծուած են կայուն հիմքեր՝ երկու երկիրներու շահերէն բխող յարաբերութիւններուն նոր որակ տալու համար:

Հայաստանի համար կարեւոր նշանակութիւն ունին արաբական աշխարհին հետ յարաբերութիւնները՝ նկատի ունենալով թէ՛ այդ երկիրներուն հաւաքական մեծ ներուժը, թէ՛ ռազմաքաղաքական որոշ հետաքրքրութիւնը եւ թէ՛ հայկական ստուար գաղութներու ներկայութիւնը այնտեղ: Երեւանի իշխանութիւնները այս իմաստով լաւ կը գիտակցին արաբական աշխարհին մէջ Լիբանանի ունեցած առանձնաշատուկ տեղին: Փաստօրէն, Լիբանան արաբական միակ երկիրն է՝

- որուն հետ Հայաստան ստորագրած է «բարեկամութեան եւ համագործակցութեան» համաձայնագիր:

- որ պաշտօնապէս ճանչցած է Հայկական Յեղասպանութիւնը:

- որ Իսլամական Խորհրդաժողով կազմակերպութեան մէջ ձեռնպահ կը քուէարկէ Լեռնային Ղարաբաղի մասին Հայաստանի դէմ ներկայացուած բանաձեւերուն:

- որուն կառավարութեան մէջ կայ հայ նախարար (կամ նախարարներ), իսկ խորհրդարանին մէջ՝ հայ երեսփոխաններ:

- որուն դպրոցներուն մէջ հայերէնը երկրորդ պարտադիր՝ ընտրովի լեզուն է՝ սպաներէնի եւ իտալերէնի կողքին:

Փոխադարձաբար, Լիբանանի համար Հայաստանը մեծ կարեւորութիւն կը ներկայացնէ իբրեւ դարպաս՝ ԱՊՀի երկիրներու շուկայ բացելու համար: Ռազմաքաղաքական իմաստով եւս երկու երկիրները փոխադարձ գործակցութեան հնարաւորութիւններ ունին:

Հետեւաբար, երկու երկիրներու միջեւ յարաբերութիւններու զարգացումը ունի կայուն հիմքեր եւ թելադրուած է առարկայական պատճառներէ: Կողմերու միջեւ գոյութիւն ունեցող բարձր մակարդակի դիւանագիտական յարաբերութիւնները եւս արտայայտութիւնն են այս իրողութեան: Նախագահներ Ռոպէրթ Քոչարեանի եւ էմիլ Լահուտի փոխադարձ այցելութիւնները Լիբանան եւ Հայաստան (2000 Փետրուարին եւ 2001 Մայիսին) կարեւոր հանգրուաններ եղան Հայաստան - Լիբանան կապերու եւ յարաբերութիւններու ամրապնդման ու ապագայ զարգացման իմաստով:

Անցնող 10 տարիներուն, Հայաստանի եւ Լիբանանի միջեւ ստորագրուած են աւելի քան տասնեակ մը միջ-կառավարական համաձայնագիրներ՝ օդանաւային հաղորդակցութեան, միջազգային ցամաքա-

յին փոխադրութիւններու, մշակութային համագործակցութեան, բարձրագոյն կրթութեան եւ գիտութեան, միջնակարգ կրթութեան, զբօսաշրջութեան եւ զանազան այլ բնագաւառներու մէջ, այնուամենայնիւ Երեւան - Պէյրութ գործակցութիւնը տակաւին հեռու կը մնայ բաւարար ըլլալէ:

Երկու երկիրներու կառավարութիւններուն միջեւ կնքուած համաձայնագիրներուն մէջ յատկապէս կարեւոր է Սեպտեմբեր 1998ին Պէյրութի մէջ ստորագրուած «եկամուտներու եւ ինչքի կրկնակի տուրքը ջնջելու եւ տուրքէ խուսափումները կանխելու» համաձայնագիրը, որ կ'առաջադրէ ամրապնդել երկու երկիրներու միջեւ տնտեսական գործակցութիւնը եւ կը ջնջէ փոխադարձ շահատուրքի, եկամտահարկի եւ գոյքահարկի հարկային խտրականութիւնը:

Երկու երկիրներու տնտեսական յարաբերութիւններու զարգացման մէջ կարեւոր նշանակութիւն ունի նաեւ 1995ին վաւերացուած «ներդրումներու փոխադարձ քաջալերանքի եւ պաշտպանութեան» համաձայնագիրը, որ կ'ընդգրկէ ընդհանուր կէտեր Հայաստանի թէ Լիբանանի մէջ ներդրումները քաջալերելու եւ պաշտպանելու:

Անշուշտ, երկուստեք տնտեսական շահաւէտ գործակցութեան զարգացումը արգելակող ազդակներ չատ կան, սակայն անոնց մէկ մասը արդէն յաղթահարուած է: Լուրջ աշխատանք կը մնայ դեսպանական մակարդակով ներկայացուած երկու երկիրներու դիւանագիտական ներկայացուցչութիւններուն, որոնցմէ կը սպասուի, որ հետեւողական քայլերու ձեռնարկեն՝ տնտեսական գործակցութեան գոյութիւն ունեցող ներուժը զարգացնելու համար:

Վերջապէս, տեղին է հաստատել, որ Հայաստանի եւ Լիբանանի միջեւ բազմակողմանի յարաբերութիւններու ամրապնդման եւ զարգացման մէջ մեծ է դերը լիբանանահայութեան, որ կարող է եւ պէ՛տք է հանդիսանայ բարեկամ երկու երկիրները իրարու կապող հաստատուն եւ յուսալի կամուրջ:



30 Մայիս 1999. Լիբանանի հայաստանցիները դեսպանատան մէջ կը մասնակցին խորհրդարանական ընտրութիւններու

Վ. ԱԻԱԳԵԱՆ

ԴԵՍՊԱՆ ԹՈՆԻ ՊԱՏԱՈՒԻ



Հայաստանի մէջ Լիբանանի դեսպան Թոնի Պատաուի լիբանանեան դիւանագիտութեան հանրաժանօթ անուններէն է: Ան դիւանագիտական ասպարէզ մուտք գործած է 1971ին եւ անցնող երեսուն տարիներուն ներկայացուցչական պաշտօններ վարած է նախկին Չեխոսլովաքիոյ, Նիճերիոյ, Սպանիոյ, Չուիցերիոյ, Եգիպտոսի եւ Աւստրալիոյ մէջ: Ան Երեւանի մէջ Հայաստանի դեսպան նշանակուած է 11 Յունիս 1999ին, յաջորդելով Սաստ Չախիայի:

Լիբանանեան «Նահար» թերթին տրուած հարցազրոյցի մը մէջ ան դիտել կու տայ, որ

Լիբանան-Հայաստան դիւանագիտական կապերը ծայր տուին Խ. Միութեան քայքայումէն ետք: Լիբանան Հայաստանի անկախութիւնը ճանչցաւ 1991ի վերջերը եւ Երեւանի մէջ իր դեսպանատունը բացաւ 5 Մայիս 1997ին: Հայաստան Լիբանանի մէջ իր դեսպանատունը բացաւ տարի մը առաջ՝ 15 Մայիս 1996ին:

Դեսպան Պատաուիի համաձայն, Հայաստանի մէջ լիբանանեան գաղութին թիրջատ փոքր է: Վերջին տուեալներով այսօր Հայաստանի մէջ կ'ապրին 120 լիբանանցիներ, որոնց 30ը ուսանողներ են, իսկ մնացեալը՝ գործատէրեր:

Դեսպանը կը հաստատէ, որ երկու երկիրները կրնան ունենալ շահաւէտ գործակցութիւն: Հայաստան կրնայ օգտուիլ Լիբանանի դրամատնային, էլեւմտական եւ տնտեսական մարզերու փորձառութեան, փոխադարձաբար՝ Լիբանան կրնայ մեծ օգուտ քաղել Հայաստանի բարձր արհեստագիտութեան, քիմիական ճարտարարւեստի, գիտական հետազոտութիւններու եւ արուեստներու մէջ արձանագրած յաջողութիւններէն:

ԼԻԲԱՆԱՆՑԻ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Հայաստանի անկախութեան վերականգնման 11րդ տարին կը գուգադիպի հայ-լիբանանեան յարաբերութիւններու հաստատման 10ամեակին:

1992-2002: 10 տարուան պատմութիւն մը, որ բնորոշուեցաւ երկու երկիրներուն միջեւ բաւական սերտ կապերով, ո՛չ միայն քաղաքական մարզին մէջ, այլ նաեւ՝ առեւտրական, տնտեսական, կրթական, մշակութային, գիտական եւ այլ մարզերուն մէջ:

Արդարեւ, երկու երկիրներուն միջեւ գոյութիւն ունեցող համագործակցութիւնը եւ սերտ յարաբերութիւնները եկան անգամ մը եւս շեշտելու նմանութեան այն եզրերը, որոնք գոյութիւն ունին երկու երկիրներուն եւ ժողովուրդներուն միջեւ:

Հայաստան - Լիբանան յարաբերութիւնները անցնող տասնամեակին յատուկ կարեւորութիւն ստացան մանաւանդ տնտեսական եւ առեւտրական մարզերուն մէջ: Հայրենի արտադրութիւններ հետզհետէ տեղ գտան լիբանանեան շուկային մէջ: Փորձ կատարուեցաւ նաեւ լիբանանեան արտադրութիւնը ծանօթացնելու հայրենի հայութեան:

Այս ծիրին մէջ լիբանանցի եւ լիբանանահայ բազմաթիւ գործարարներ կայք հաստատեցին Հայաստանի մէջ, կատարեցին իրենց անձնական ներդրումները Հայաստանի տնտեսութեան մէջ եւ հանդիսացան կենդանի կապը Հայաստանի ու Լիբանանի արտադրութեան մարզերուն միջեւ:

Լիբանանեան «Նահար» օրաթերթը ընթացիկ տարուան Մայիս ամսուն հրատարակած իր «Լիբանանեան Սփիւռք» յաւելումին մէջ, Ջեխիոյ կողքին, յատուկ բաժին մը յատկացուցած էր նաեւ Հայաստանին, անոր զբօսաշրջական առանձնայատկութիւններուն եւ Հայաստանի մէջ կայք հաստատած լիբանանցի եւ լիբանանահայ գործարարներուն, որոնք տնտեսական յաջողութեան հեռանկարով իրենց ներդրումները կը կատարեն Հայաստանի տնտեսութեան զանազան մարզերուն մէջ:

Հայաստանի մէջ ապրող լիբանանցի երիտասարդ գործարարներէն մէկն է Ռոյ Ջայրֆա, որ ընդհանուր պատասխանատուն է N. Plus ընկերութեան մէկ ճիւղը նկատուող Sevan.ltd-N.Plus ներածումի եւ արտածումի ընկերութեան:

Հաստատութիւնը կը ներածէ պրազիլեան հաւ եւ էքուստորեան պանան եւ այս ապրանքները կը ցրուէ հայաստանեան շուկային մէջ: Բացի Ջայրֆայէն, ընկերութիւնը կ'ընդգրկէ 25 հայաստանցի պաշտօնեաներ:

Անդրադառնալով Հայաստանի մէջ գոյութիւն ունեցող ընկերային-տնտեսական ծանր դրութեան, Ռոյ Ջայրֆա կ'ըսէ, թէ ընկերութիւնը կը փորձէ պայքարիլ Հայաստանի դիմագրաւած տնտեսական ծանր իրավիճակին դէմ, եւ «կ'աշխատինք ընկերութեան միւս մասնաճիւղերուն հետ իրագործել մեր սպասած բարգաւաճումը՝ հետագայ յաջողութիւն»:



15 Փետրուար 2002. Հայաստան-Լիբանան առեւտրական գործակցութեան համաձայնագրի ստորագրութիւն: Ներու իրագործման հեռանկարով»:

Լիբանանցի երիտասարդ գործարարը՝ Ռոյ Ջայրֆա, որ տակաւին մէկ տարի չէ եղած իր Հայաստան հաստատուելուն, հայրենի ժողովուրդին մասին լաւ տպաւորութիւններ կը փոխանցէ «Նահար»ի յաւելումին: Ան կ'ըսէ. «Նկատեցի, որ անոնք մեզ շատ կը սիրեն. անոնցմէ շատեր այցելած են Պէյրութ, սիրած են զայն եւ բացառիկ տպաւորութիւն ունին անկէ»: Լիբանանցի երիտասարդը Հայաստանի մէջ հանդիպած է բազմաթիւ լիբանանցիներու, որոնք կ'աշխատին սուրճի արտադրութեան մարզին մէջ, իսկ լիբանանցիներու ուրիշ խումբ մը կ'աշխատի հագուստեղէնի մարզին մէջ:

«Նահար»ի «Լիբանանեան Սփիւռք» յաւելումին հանդիպում մը ունեցած էր նաեւ «Վաք Թրեյտինկ Քամփընի» տնօրէն խորհուրդի նախագահ Վահագն Քիրիշճեանի հետ: Ծանօթ է, որ Տորայի մէջ իր կեդրոնը հաստատած ընկերութիւնը ունի հանքային բնական կազով «Ջերմուկ» ջուրի տեսակին վաճառականական մենաշնորհը Լիբանանի մէջ:

Թէ ի՞նչպէս սկսաւ հայկական արտադրութիւններու Լիբանան ներածումը. «Վաք» առեւտրական ընկերութեան տնօրէն խորհուրդի նախագահը կը պատասխանէ «Նահար»ի թղթակիցին. «Հայկական ապրանքներու ներածումը սկսաւ չորս տարի առաջ: Հայաստանէն Լիբանան ներածուած առաջին ապրանքը «Ջերմուկ»ն էր, հետագային լիբանանեան շուկայ ներածուելիք ապրանքներուն վրայ աւելցուցինք «Հայկական Պրանտի» եւ «Վետի Ալթո» գինիի տեսակները: Այս վերջինէն կան 3 տեսակներ՝ կարմիր, սպիտակ եւ վարդագոյն: Այս ամբողջ տեսակներն լաւ ընդունելութիւն կը գտնէ լիբանանեան շուկային մէջ»:

Խօսելով ապագայի ծրագիրներուն մասին, Վահագն Քիրիշճեան կ'ըսէ, թէ աշխատանքային ծիրը ընդլայնելու նպատակով վերջերս ստեղծուած է Լիբանանեահայկական Առեւտրական Ընկերութիւնը՝ ԼիՊԱՐՔՕ, հայկական նոր ապրանքներ ներածելու համար: Այդ ապրանքներէն կարելի է յիշել Լիբանանի մէջ գոյութիւն չունեցող մրգահիւթի տեսակ մը, նուազ ցիքոթին ունեցող «Սիկարոն» ծխախոտի տեսակը եւ միջազգային մրցանակներ չա-

հած «Կոտայք» գարեջուրի տեսակը:

Լիբանանցի երիտասարդ գործարար մըն է նաեւ Թոնի Ռաին, որ Երեւանի մէջ կը վարէ «Կէյմզ Ուըրլտ» քաղցինոյին ընկերութիւնը, որ իր կարգին մէկ մասնաճիւղն է Տուպայի մէջ գտնուող ընկերութեան մը, որ մասնագիտացած է քաղցինոներու յատուկ խաղի մեքենաներու առուծախով եւ վերակազմութեամբ:

Հիւսիսային Լիբանանի Անտքէթ գիւղէն Թոնի Ռաի ներքին ճարտարապետութեան եւ կահաւորումի մասնագէտ է: Լիբանանի մէջ գոյութիւն ունեցող տնտեսական ծանր պայմանները պատճառ դարձան, որ ան արտագաղթէ Երկրէն եւ Հայաստանի մէջ աշխատանքային այլ մարզի մը՝ քաղցինոներու աշխարհին մէջ գտնէ ինքզինք:

Ան թերթին թղթակիցին ուղղելով իր խօսքը կ'ըսէ. «Հայաստանի մէջ ամէնէն մեծ հարցը կը կայանայ այն երեւոյթին մէջ, որ հարկային օրէնսդրութիւնը մնայուն կերպով մեզ անակնկալի կը մատնէ իր արագ փոփոխութիւններով: Այդ փոփոխութիւնները կը սկսին կիրարկուիլ անմիջապէս. երեւոյթ մը, որ մեզի բաւարար առիթ չի տար մեր վիճակը կարգի դնելու»:

Թոնի Ռաի Հայաստանի իշխանութիւններուն Լիբանանի քաղաքացիներուն նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքը կը գնահատէ շատ լաւ: «Հայաստանի իշխանութիւնները տարբերութիւն չեն դնել անհատներու ազգութեան մէջ, եւ դիւրութիւններ կու տան կեցութեան արտօնութիւն ստանալու համար: Հայաստան եկող այցելուն միւնչեւ իսկ կրնայ մոտքի արտօնագիր ստանալ ուղղակի օդակայանէն», կ'եզրակացնէ Թոնի Ռաի, միաժամանակ կոչ ուղղելով իշխանութիւններուն, որ ներդրումի մարզին մէջ աւելի քաջալերական պայմաններ ստեղծեն օտար ներդրումներուն համար, որովհետեւ ներկայ վիճակը թոյլ չի տար աւելի արդիւնաւէտ կերպով ներդրումներ կատարելու օտար գործարարներուն կողմէ:

Հակառակ բոլոր դժուարութիւններուն, սակայն, Հայաստանի մէջ օտար գործարարներուն կողմէ կատարուելիք ներդրումները կը խոստանան հեռանկարային ապագայ:

Ըլլա՛յ միջպետական համաձայնութիւններու ճամբով, ըլլայ անհատական նախաձեռնութիւններու մակարդակին վրայ, վերջին 10 տարիներուն Հայաստան - Լիբանան առեւտրական - տնտեսական յարաբերութիւնները նուաճած են որակական մակարդակ մը: Այո՛, տակաւին եղած աշխատանքը սպասուածէն շատ հեռու է, սակայն ապագան բաց է Հայաստանի եւ Լիբանանի գործարարներուն դիմաց Լիբանան - Հայաստան առեւտրական տնտեսական յարաբերութիւնները աւելի ամուր հիմերու վրայ դնելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԼԻԲԱՆԱՆ ՏԱՄՆԱՄԵԱՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

1991 ԴԵԿՏԵՄԲԵՐ 30 - Լիբանան ճանչցաւ Հայաստանի անկախութիւնը:

1992 ՄԱՐՏ 4 - Հայաստան եւ Լիբանան ստորագրեցին դիւանագիտական եւ հիւպատոսական յարաբերութիւններու հաստատման մասին համաձայնագիր (Րաֆֆի Յովհաննէսեան - Ֆարէս Պուէյզ):

1993 ԴԵԿՏԵՄԲԵՐ - Հայաստանի Գերագոյն Խորհուրդի նախագահ Բաբգէն Արարքեանի Լիբանան այցելութիւնը. «Հայաստանի Գերագոյն Խորհուրդի եւ Լիբանանի խորհրդարանի միջեւ գործակցութեան» համաձայնագիրի ստորագրութիւնը:

1994 ՅՈՒՆԻՍԿՈՒԼ - Երուանդ Մելքոնեան Հայաստանի ժամանակաւոր հաւատարմատար նշանակուեցաւ Լիբանանի մէջ:

1994 ՅՈՒՆԻՍԿՈՒԼ - Պէյրութի մէջ տեղի ունեցաւ Հայաստանի դեսպանատան բացման պաշտօնական արարողութիւնը, որուն ներկայ գտնուեցաւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վահան Փափագեան:

1994 ՆՈՅԵՄԲԵՐ - Հայաստան այցելեց Լիբանանի փոխադրամիջոցներու նախարար Օմար Միսքաուի: Օղային հաղորդակցութեան մասին համաձայնութեան ստորագրութիւնը:

1995 ՄԱՅԻՍ - Հայաստանի վարչապետ Հրանդ Բաբրատեանի Լիբանան այցելութիւնը: Այցելութեան ընթացքին ստորագրուեցան հետեւեալ համաձայնագիրները.

- Առեւտրական, տնտեսական, գիտական եւ արհեստագիտական համագործակցութեան,
- նիւթական ներդրումներու խրախուսման եւ փոխադարձ պաշտպանութեան,
- օդային հաղորդակցութեան:

1996 ՄԱՅԻՍ - Երուանդ Մելքոնեան Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան նշանակուեցաւ Լիբանանի մէջ:

1996 ՕԳՈՍՏՈՍ - Հայաստանի Կեդրոնական Դրամատան նախագահ Բաբրատեանի այցելութիւնը Լիբանան. «Հայաստանի եւ Լիբանանի Կեդրոնական դրամատուներուն միջեւ հաշուարկային յարաբերութիւններու եւ դրամատնային համագործակցութեան վերաբերեալ» համաձայնագիրի ստորագրութիւնը:

1997 ՄԱՐՏ - Լիբանան այցելեց Հայաստանի արտաքին գործոց նախարար Ալեքսանտր Արզումանեան՝ պատուիրակութեան մը ուղեկցութեամբ: Մաքսային համագործակցութեան համաձայնագիրի ստորագրութիւնը:

1997 ՄԱՅԻՍ - Լիբանան Հայաստանի մէջ ժամանակաւոր հաւատարմատար նշանակեց Սատ Զախիան:

1997 ՍԵՊՏԵՄԲԵՐ - Հայաստան այցելեց Լիբանանի խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի՝ պատուիրակութեան մը ընկերակցութեամբ:

1997 ՀՈԿՏԵՄԲԵՐ - Հայաստան այցելեց Լիբանանի վարչապետ Ռաֆիք Հարիրի: Երկու երկիրներուն միջեւ ստորագրուեցաւ բարեկամութեան եւ համագործակցութեան համաձայնագիր:

1997 ՆՈՅԵՄԲԵՐ - Լիբանան այցելեց Հայաստանի մշակոյթի, երիտասարդութեան հարցերու եւ մարմնամարզի նախարար Արմէն Սմբատեան՝ մասնակցելու Եղիշէ Զարենցի ծննդեան հարիւրամեակի տօնակատարութիւններուն: Այցելութեան ընթացքին կողմերուն միջեւ ստորագրուեցաւ մշակութային համագործակցութեան համաձայնագիր:

1998 ՄԱՅԻՍ - Հայաստան այցելեց Լիբանանի վարչապետ Ռաֆիք Հարիրի:

1998 ՅՈՒՆԻՍԿՈՒԼ - Աշխատանքային երկօրեայ այցելութեամբ Լիբանան ժամանեց Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան:

1998 ՅՈՒՆԻՍԿՈՒԼ - Հայաստանի վարչապետին Լիբանան այցելութիւնը եւ «Տուրիզմ պիզնէս ին Արմենիա» տնտեսական համագումարը նախապատրաստելու համար Պէյրութ ժամանեց Հայաստանի կառավարական պատուիրակութիւնը՝ Շահէն Գարամանուկեանի գլխաւորութեամբ:

1998 ՍԵՊՏԵՄԲԵՐ - Հայաստանի վարչապետ Արմէն Դարբինեանի այցելութիւնը Լիբանան: Հայաստանի եւ Լիբանանի կառավարութիւններուն միջեւ ստորագրուեցան «եկամուտներու եւ գոյքի կրկնակի տուրքերէ զերծ պահելու», «զբօսաշրջութեան մարզին մէջ համագործակցութեան», «բարձրագոյն կրթութեան եւ գիտութեան բնագաւառէն ներս համագործակցութեան», «միջնակարգ կրթութեան բնագաւառէն ներս համագործակցութեան», մասին համաձայնագիրներ:

1998 ՍԵՊՏԵՄԲԵՐ - Տեղի ունեցաւ «Տուրիզմ պիզնէս ին Արմենիա» առեւտրական համագումարը Պէյրութի մէջ:

1998 ՀՈԿՏԵՄԲԵՐ - Լիբանանի մէջ Հայաստանի դեսպանատան նոր շէնքի բացումը եւ Հայաստանի նախագահի արտաքին քաղաքականութեան հարցերու խորհրդական Արամ Սարգսեանի այցելութիւնը Լիբանան, ուր ան հանդիպումներ ունեցաւ Լիբանանի նախագահին, խորհրդարանի նախագահին եւ վարչա-



Երեւանի եւ Պուրճ Համուտի քաղաքապետները լիբանանահայ նահատակներու Յուշակոթողին առջեւ

պետին հետ:

1999 ՄԱՅԻՍ - Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի այցելութիւնը Լիբանան, Հայաստան-Սփիւռք համաժողովի նախապատրաստական աշխատանքներու ծիրէն ներս:

1999 ՄԱՅԻՍ - Հայաստանի վարչապետի խորհրդական Նարեկ Սարգսեանի գլխաւորած կառավարական պատուիրակութեան այցելութիւնը Լիբանան եւ հանդիպում «Սոլիտեր» ընկերութեան նախագահին հետ:

1999 ՅՈՒՆԻՍԿՈՒԼ - Թոնի Պատուի Հայաստանի մէջ Լիբանանի արտակարգ եւ լիազօր դեսպան նշանակուեցաւ:

1999 ՅՈՒՆԻՍԿՈՒԼ - Լիբանանի նախագահի ներկայացուցիչ, զբօսաշրջութեան եւ կենսոլորտի նախարար Արթիւր Նազարեանի, վարչապետի ներկայացուցիչ, պաշտպանութեան նախարար Ղազի Զըաէյթըրի եւ լիբանանեան երեսփոխանական պատուիրակութեան մը մասնակցութիւնը Գարեգին Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի յուղարկաւորութեան:

1999 ՅՈՒՆԻՍԿՈՒԼ - Հայաստանի Արդիւնաբերողներու եւ Գործարարներու Միութեան նախագահ Ա. Վարդանեանի այցելութիւնը Լիբանան, Երեւանի մէջ տեղի ունենալիք հայ-լիբանանեան գործարարներու համաժողովին նախապատրաստութեան նպատակով: Վարդանեան հանդիպումներ ունեցաւ Լիբանանի զբօսաշրջութեան, տնտեսութեան, առեւտու-



րի եւ արդիւնաբերութեան նախարարներուն, ինչպէս՝ նաեւ գործարարներու հետ:

1999 ՅՈՒՆԻՍԿՈՒԼ - Հայաստանի Ֆիլհարմոնիք նուագախումբին մասնակցութիւնը Պաալպէքի միջազգային փառատօնին:

1999 ՍԵՊՏԵՄԲԵՐ - Հայաստանի Ազգային ձայնասփիւռի սիմֆոնիք նուագախումբին մասնակցութիւնը Ժիպէյլի մէջ տեղի ունեցած ԵՈՒՆԵՍԿՈՒՄԻ «Լիբանան՝ խաղաղութեան մշակոյթ» փառատօնին:





Նախարարներ Սեպուհ Յովնանեան եւ Ռոյալնո Շառոյեան կը ստորագրեն միջ-պետական գործակցութեան համաձայնագիր

2000 Փետրուար - Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի եւ օրեայ պաշտօնական այցելութիւնը Լիբանան:

2000 Սեպտեմբեր - Պէյրուսի քաղաքապետին այցելութիւնը Երեւան: Այցելութեան ընթացքին ստորագրուեցաւ երկու մայրաքաղաքներուն միջեւ եղբայրութեան եւ համագործակցութեան համաձայնագիր: Երեւանի փողոցներէն մէկը անուանուեցաւ Պէյրուսի անունով:

2001 ՄԱՅԻՍ - Նախագահ զօր. էմիլ Լահուտի այցելութիւնը Հայաստան: Այցելութեան ընթացքին կնքուեցաւ երկու համաձայնութիւն՝ առողջապահութեան, բժշկութեան, ինչպէս նաեւ՝ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան բնագաւառներուն մէջ:

2001 ՅՈՒՆԻՍ - Երեւանի քաղաքապետ Ռոպէրթ Նազարեանի այցելութիւնը Լիբանան, ընկերակցութեամբ փոխ քաղաքապետ Վարդան Վարդապետեանի եւ ներքին պահպանութեան



Հայաստանի եւ Լիբանանի պաշտպանութեան նախարարներ Սերժ Սարգսեան եւ Խալիլ Հըրաուի

թեան ուժերու հրամանատար Աշոտ Գիգիրեանի: Այցելութեան ընթացքին բացումը կատարուեցաւ էջրեֆիէն Պուրճ Համուտին կապող «Երեւան» կամուրջին:

2001 ՅՈՒՆԻՍ - Հայաստանի արտաքին գործոց փոխ նախարար, Երեւանի Պետական համալսարանի դասախօս Լեւոն Մկրտչեանի այցելութիւնը Լիբանան:

2001 ՕԳՈՍՏՈՍ - Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանի այցելութիւնը Լիբանան, ուր Լիբանանի պաշտպանութեան նախարար Խալիլ Հըրաուիի հետ անկնքեց զինուորական գործակցութեան համաձայնագիր:

2001 Սեպտեմբեր - Հայաստանի Ազգային ժողովի պաշտպանութեան, անվտանգութեան եւ ներքին գործոց յանձնաժողովի նախագահ եւ Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Վահան Յովհաննէսեանի այցելութիւնը Լիբանան:

2001 Դեկտեմբեր - Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արման Նաւասարդեանի պաշտօնավարութեան աւարտը եւ փոխարինումը Արեգ Յովհաննիսեանով:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԼԻԲԱՆԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐՆԵՐ

Հայաստանի անկախութեան ճանաչումէն հազիւ տարի մը ետք, Երեւանի եւ Պէյրուսի իշխանութիւններուն միջեւ ծայր տուաւ աշխուժ գործակցութիւն մը, որ իր արտայայտութիւնը գտաւ տարբեր մարզերու մասին կնքուած համաձայնագիրներով:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

Հայաստանի եւ Լիբանանի խորհրդարաններու միջեւ 1993ին ստորագրուեցաւ համագործակցութեան համաձայնագիր: Երկուստեք ստեղծուեցան խորհրդարանական բարեկամութեան խմբակցութիւններ: Լիբանան այցելեց Հայաստանի Գերագոյն Խորհուրդի նախագահ Բաբգէն Արարքեան (1993ին), իսկ Լիբանանի խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի փոխադարձ այցելութիւն տուաւ Հայաստան (1997ին):

Լիբանանի խորհրդարանը երկու անգամ բանաձեւ ընդունեց Հայկական Յեղասպանութեան ճանաչման մասին: Առաջինը՝ 3 Ապրիլ 1997ին, «Ապրիլ 24ը հայ ժողովուրդի դէմ գործադրուած ջարդերու արհաւիրքի յիշատակի օր» յայտարարութիւնը, իսկ երկրորդը՝ 11 Մայիս 2000ին, երբ Լիբանանի խորհրդարանը ընդունեց Օսմանեան կայսրութեան մէջ մէկուկէս միլիոն հայերու Յեղասպանութեան բանաձեւը:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՆՏԵՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՄԱՈՒ

Հայաստանի եւ Լիբանանի կառավարութիւններուն միջեւ տնտեսական բնագաւառէն ներս ստորագրուած են հետեւեալ փաստաթուղթերը.

- 1.- Համաձայնագիր՝ առեւտրական, տնտեսական եւ գիտական ու արհեստագիտական համագործակցութեան մասին (1995ին):
- 2.- Համաձայնագիր՝ նիւթական ներդրումներու քաջալերման եւ փոխադարձ պաշտպանութեան մասին (1995ին):
- 3.- Զբօսաշրջութեան բնագաւառէն ներս



Համագործակցութիւն (1999ին):

Հայաստանէն Լիբանան կ'արտածուին գլխաւորաբար գորգեր, սեւ մետաղներ, ոգելից եւ ոչ ոգելից խմիչքներ, արուեստի ստեղծագործութիւններ եւ այլն (տարեկան ընդամէնը՝ 223,2 հազար ամերիկեան տոլար արժէքով), իսկ Լիբանանէն Հայաստան կը ներածուի սուրճ, թէյ, համեմներ, թուղթ, ելեկտրական սարքաւորումներ, կիսաթանկարժէք քարեր, վերամշակուած մթերք եւ այլն (տարեկան ընդամէնը՝ 9355,3 հազար ամերիկեան տոլար արժէքով):

Հայաստանի վարչապետ Արմէն Դարբինեանի Լիբանան այցելութեան ժամանակ, 1998ին, Պէյրուսի մէջ տեղի ունեցաւ հայ-լիբանանեան գործարարներու առաջին համաժողովը եւ հայկական ապրանքներու ցուցահանդէս:

1999ին Երեւանի մէջ կազմակերպուեցան հայ-լիբանանեան գործարարներու երկրորդ համաժողովը եւ լիբանանեան ապրանքներու ցուցահանդէս:

Նախագահ Ռոպէրթ Քոչարեանի Լիբանան այցելութեան ընթացքին (2000), Հայաստանի Արդիւնաբերողներու եւ Գործարարներու Միութիւնը Լիբանանի Արդիւնաբերողներու Ընկերակցութեան եւ Լիբանանի Հայ Գործարարներու Միութեան հետ ստորագրեց համագործակցութեան յուշագիր մը, որուն հիմամբ կողմերը համաձայնեցան շարք մը ծրագիրներու իրականացման շուրջ՝ Վենչըր հիմնադրամի ստեղծում, օճառի եւ ձէթի արտադրութիւն, գիւղատնտեսական ապրանքներու վերամշակում, ներկերու արտադրութիւն եւ այլն:



Հայ եւ լիբանանցի գործարարներու համագործակցութեան իբրեւ արդիւնք 2000ի Մայիսին սկսաւ գործել գերմանական «Տայմլեր - Քրայլեր» ընկերութեան ինքնաշարժներու վաճառքի եւ սպասարկման կեդրոնը: 2000ի կէսերուն Հայաստանի տարածքին արդէն կը գործէին լիբանանեան դրամագլուխով 54 ընկերութիւններ:

Հայաստանի արդիւնաբերութեան եւ առեւտուրի նախարարութեան համաձայն, համագործակցութեան լուրջ հեռանկարներ կան վերամշակուող ճիւղերու եւ սնունդի արդիւնաբերութեան բնագաւառներուն մէջ՝ յատկապէս բնական հիւթերու եւ գինիներու միացեալ արտադրութեան, միրգերու եւ բանջարեղէններու վերամշակման ու ծրարման, թեթեւ արդիւնաբերութեան, զբօսաշրջութեան, դրամատնային եւ այլ բնագաւառներու մէջ:

Լիբանանի վարչապետ Ռաֆիք Հարիրիի Հայաստան կատարած այցելութեան ընթացքին (1998ին) համաձայնութիւն գոյացաւ ստեղծելու հայ - լիբանանեան միջկառավարական յանձնախումբ մը:

Հեռանկարներ կան նաեւ ելեւմտական եւ դրամատնային մարզերու մէջ համագործակցութեան: 1996ին Լիբանան այցելեց Հայաստանի կեդրոնական Դրամատան նախագահ Բագրատ Ասատրեան: Այցելութեան ընթացքին ստորագրուեցաւ «հաշուարկային յարաբերութիւններու, ազգային արժոյթներու փոխադարձ փոխարկելիութեան եւ դրամատնային համակարգերու համագործակցութեան վերաբերեալ» համաձայնագիր:

2000ին Հայաստան այցելեց Լիբանանի կեդրոնական Դրամատան նախագահ Ռիատ Սալամէ, եւ ստորագրուեցաւ յուշագիր մը՝ մասնագէտներու, փորձառութեան եւ տեղեկատուութեան փոխանակման մասին:

ԿՐԹՈՒԹԻՒՆ, ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ԲՆԱԳԱՒԱՌ

Կրթութեան եւ գիտութեան մարզերուն մէջ Հայաստանի եւ Լիբանանի միջեւ ստորագրուած են.-

1.- Համագործակցութեան համաձայնագիր մը՝ Հայաստանի բարձրագոյն կրթութեան եւ գիտութեան նախարարութեան եւ Լիբանանի բարձրագոյն կրթութեան նախարարութեան միջեւ (1994ին):

2.- Համագործակցութեան համաձայնագիր Հայաստանի եւ Լիբանանի կառավարութիւններուն միջեւ՝ բարձրագոյն կրթութեան եւ գիտութեան բնագաւառէն ներս (1998ին):

Երեւանի Պետական համալսարանի արեւելագիտութեան ամպիոնի երեք ուսանողներ 1999ին գործուղուեցան Լիբանանեան համալսարան, արաբերէն լեզուի եւ գրականութեան բաժանմունքին մէջ ուսանելու:

Լիբանանի նախարարաց խորհուրդի 26 Յուլիս 2000ի թիւ 10227 որոշումով ճշդուեցաւ, որ երկրի միջնակարգ դպրոցներուն մէջ իտալերէնի եւ սպաներէնի հետ, ընտրական կարգով պիտի դասաւանդուի նաեւ հայերէն:

Քննարկման ընթացքի մէջ է Երեւանի Պետական համալսարանին եւ Պէյրութի Լիբանանեան համալսարանին միջեւ գիտական, ուսումնական, մշակութային համագործակցութեան համաձայնագիրի մը նախագիծը:

Մշակութային գետնի վրայ կողմերուն միջեւ ստորագրուած է.

1.- Համագործակցութեան համաձայնագիր՝ Հայաստանի եւ Լիբանանի կառավարութիւններուն միջեւ (1997ին):

2.- 2000 - 2001ին մշակութային համագործակցութեան գործնական ծրագիր՝ Հայաստանի մշակոյթի, երիտասարդութեան հարցերու եւ մարմնամարզութեան նախարարութեան եւ Լիբանանի մշակոյթի եւ բարձրագոյն կրթութեան նախարարութեան միջեւ (2000ին):

Լիբանանի մէջ մշակութային բազմաբունոյթ ելոյթներ, որոնց շարքին՝ կազմակերպուած հայկական մշակութային օրեր, ցուցահանդէսներ, Հայաստանի Ֆիլհարմոնիք եւ Ազգային ձայնասփիւռի Սիմֆոնիք նուագախումբերու համերգներ, Օփերայի եւ Պալէի թատրոնի ելոյթներ եւ այլն:

Լիբանան Հայաստանի մէջ մշակութային ձեռնարկներ գրեթէ չէ կազմակերպած: Պար-

բերաբար յետաձգուած են Հայաստանի մէջ լիբանանեան մշակութային օրերու կազմակերպման ծրագիրները:

ՓՈՒՍԱԳՐԱՄԻՋՈՅՆԵՐՈՒ ԲՆԱԳԱՒԱՌ

Փոխադրամիջոցներու մարզին մէջ, կողմերուն միջեւ ստորագրուած է երեք համաձայնագիր.

1.- Հայաստանի եւ Լիբանանի կառավարութիւններուն միջեւ օդային հաղորդակցութեան համաձայնագիր (1995ին):

2.- Ինքնաշարժներու միջազգային երթեւեկի մասին համաձայնագիր (1996ին):

3.- Երկու կառավարութիւններուն միջեւ միջազգային փոխադրութիւններուն մասին համաձայնագիր (2000ին):

Կը գործէ Երեւան - Պէյրութ - Երեւան օդային գիծը:

Երեւանի եւ Պէյրութի քաղաքապետարաններուն միջեւ ստորագրուած է համաձայնագիր՝ Երեւանը եւ Պէյրութը «քոյր քաղաքներ» հռչակելու: Պէյրութի քաղաքապետը Երեւան այցելեց 2000ին, իսկ Երեւանի քաղաքապետը՝ Պէյրութ (2001ին):

Երեւանի Շահումեանի հրապարակին յարող փողոցը վերանուանուած է Պէյրութ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՐՄԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԲՆԱԳԱՒԱՌ


Առողջապահութեան եւ բժշկութեան մարզերուն մէջ Հայաստանի եւ Լիբանանի միջեւ գործակցութեան համաձայնագիր մը ստորագրուեցաւ Մայիս 2001ին, նախագահ Լահուտի Հայաստան այցելութեան ընթացքին:

Նոյն այցելութեան ընթացքին կողմերը ստորագրեցին նաեւ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան բնագաւառներուն վերաբերեալ նոր համաձայնագիր մը:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԼԻԲԱՆԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՄՐՁՈՒՄԸ՝ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ՃԱՄԲՈՎ

Հայաստանի անկախացումով Հայաստան - Սփիւռք գործակցութեան նոր հորիզոններ բացուեցան: Հայութեան երկու հատուածներուն միջեւ շօշափելի գործակցութեան քայլեր առնուեցան յատկապէս մշակութային բնագաւառին մէջ: Լիբանանահայութիւնը եղաւ առաջիններէն, որ մշակութային կամըջում մը կատարեց Հայաստանէն Լիբանան, թէեւ այդ կամըջումը սահմանափակուեցաւ գաղութով միայն եւ երբեք չհասաւ Հայաստան-Լիբանան երկիրներու մակարդակի մշակութային ցանկալի գործակցութեան:

Հայաստանի անկախացումէն ետք, առաւելաբար, հայկական մշակութային միութիւններու եւ կազմակերպութիւններու հրաւերով Լիբանան այցելեցին երգիչ-պարի անսամպլներ, թատերա-



խումբեր, կերպարուեստի գործիչներ, անհատ արուեստագէտներ եւ այլն:

Լիբանան այցելած երգի-պարի առաջին համոյթներէն յիշատա-

կելի է «Մարաթուկ»ը: 1992ի սկիզբը, լիբանանահայութիւնը ըմբոշխնեց Հայաստանի Գոլոսական ժողովրդային Անսամպլին ելոյթները, ղեկավարու-

թեամբ հանրածանօթ արուեստագէտներ Ռուբէն Ալթունեանի եւ Գրիգոր Սանդալճեանի: Նոյն տարուան Մարտին Լիբանան այցելեց Հայաստանի Պետական Ակադեմիայի երգչախումբը, մօտ 85 անդամներով, խմբավարութեամբ Յովհաննէս Չէքիճեանի: Տարուան վերջաւորութեան, Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան նախաձեռնութեամբ եւ Լիբանանի մշակոյթի եւ բարձրագոյն կրթութեան նախարար Միշէլ Էտտէի հովանաւորութեամբ, լիբանանեան երեք քաղաքներու մէջ ելոյթներով հանդէս եկաւ Հայաստանի Պարարուեստի Պետական համոյթը:

Նոյն տարին Լիբանան այցելեցին նաեւ «Տաղարան» երգի ու նուագի խումբը, «Բարեկամու-

թիւն» երգ ու պարի խումբերը (մեծերու եւ մանկապատանեկան խմբակներ):

Անցնող տասնամեակին Լիբանան ան այցելած գեղարուեստական խումբերուն մէջ գաղութին վրայ իր յատուկ դրոշմը ձգեց Շուշիի «Վարանդա» մանկապատանեկան երգչախումբը: Նոյեմբեր 1995ին Արցախի Օժանդակութեան Մարմինին հրահանգով Լիբանան ժամանած «Վարանդա»ն եօթը համերգներով հմայեց արուեստասէր հասարակութիւնը եւ լիբանանահայութիւնը ընդհանրապէս: «Վարանդա»ի քոյր միաւորը՝ Համազգայինի «Կարկաչ»ը հետագային այցելեց Հայաստան եւ Արցախ:

«Չարենցեան Շաբաթ»ի շրջագիծին մէջ, 1997ին Պէյրութ այցելեց եւ «Էսեմպլի Հոլ»ի մէջ ելոյթ ունեցաւ Երեւանի Սենեկային նուագախումբը, խմբավարութեամբ Յարութիւն Թոփիկեանի:

Հայաստան - Լիբանան մշակութային կապերու հաստատման փորձերուն մէջ կարեւոր դեր վերապահուած է համալիբանանեան փառատօներուն հայրենի արուեստագէտներու մասնակցութեան: Նշանակալից էր մանաւանդ 1999 տարին, որ Լիբանանի մէջ յայտարարուած էր մշակութային տարի, իսկ Լիբանանը՝ «Մշակութային Երկիր»:

Այս ծիրին մէջ Լիբանան ժամանեց Հայաստանի Հանրապետութեան Ֆիլհարմոնիք նուագախումբը, ղեկավարութեամբ մաեսթրո Լորիս Ժգնալորեանի, մասնակցելու համար Պալատի փառատօնին: ԵՈՒՆԵՍԿՕ-ի հրահանգին ընդառաջելով՝ Լիբանան այցելեց եւ նոյն տարուան Սեպտեմբերին ժիպէյլի փառատօնին մասնակցեցաւ Հայաստանի Հանրապետութեան ձայնասփիւռի Սիմֆոնիք նուագախումբը, ղեկավարութեամբ աշխարհահռչակ խմբավար Օհան Տուրեանի:

2000ի մշակութային յատկանշական ձեռնարկներէն եղան Հայաստանի վիրթուոզ փոքրիկ ջու-

թակահարներու նուագահանդէսները, նախաձեռնութեամբ «We Group»ի եւ Լիբանանի մէջ Հայաստանի ղեսպանատան: Նաեւ Քազինօ Տիւ Լիւպանի մէջ Հայաստանի պետական օփերայի խումբը ներկայացուց. «Լաթրափիաթա» օփերան:

Վերջերս Լիբանան այցելեց նաեւ Հայաստանի Գիւմրի քաղաքի Սիմֆոնիք երգչախումբը նուագախումբը:

Նուագախումբերու, երգչախումբերու եւ պետական համոյթներու կողքին, անցնող տասնամեակին Լիբանանի մէջ ներկայացումներ կատարեցին հայրենի բազմաթիւ թատերախումբեր: Այսպէս, Լիբանան այցելեցին Հայաստանի Տրամաթիքական թատերախումբը, Հայաստանի «Արթիսթական թատերախումբ»ը (գլխավորութեամբ հանրածանօթ դերասան Մհեր Մկրտչեանի) եւ Համազգայինի թատերախումբը (գլխավոր ղեկավարութեամբ Սօս Սարգսեանի):

Հայաստանի անկախացումէն ետք Լիբանան այցելեցին եւ լիբանանահայ կազմակերպութիւններու հրահանգով գաղութին մէջ գործեցին հայրենի բազմաթիւ արուեստագէտներ: Այս իմաստով Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան հրահանգով Լիբանան ժամանած առաջին արուեստագէտներն էին՝ խմբավար - երգահան Յարութիւն Թոփիկեան, որ ստանձնեց նորակազմ «Գուսան» երգչախումբը, Ալեքսան Կարապետեան, որուն վստահուեցաւ «Գորանի» երգի - պարի համոյթի երգչախումբի բաժինը եւ երաժիշտ Սարո Դանիէլեան: Դարձեալ Համազգայինի հրահանգով Համազգայինի պարարուեստին եւ «Գայիանէ» պարարուեստի ղարոցին պարի ուսուցումը ստանձնեց հայրենի պարադիր եւ պարուսոյց Ֆելիքս Յարութիւնեան: Հայրենի արուեստագէտ Վիգէն Յովսէփեանի վստահուեցաւ Համազգայինի «Արեգ» մանկապատանեկան թատերախումբը, իսկ խմբավար Եր-



անդ Երկանեան ստանձնեց Համազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտանոցի տնօրէնութիւնը: Համազգայինի «Թորոս Ռոսլին» կերպարուեստի Ակադեմիային մէջ պաշտօնավարեցին գեղանկարիչ Բագրատ Գրիգորեան եւ քանդակագործ - գեղանկարիչ Մկրտիչ Մազմանեան, որոնք ներկայացուցին նաեւ ցուցահանդէսներ:

Անցեալ տասնամեակին Լիբանանի մէջ ելոյթներ ունեցան նաեւ հայրենի անուանի մեկնաբաններ, ինչպէս՝ Ռայիսա Մկրտչեան, Յովհաննէս Պատալեան, Օֆելիա Համբարձումեան, Ռուբէն Մաթեոսեան, Կիրակի Մինասեան, Ռեբեկա Օճախեան, Անահիտ Սուրէնեան, Ալեքսանտր Պողոսեան, Սահակ Սահակեան, Արթիւր Մեսչեան, Ռուբէն Հախվերդեան, Արմէն Մովսիսեան, էտուարտ Զօրիկեան, Վահան Արծրունի:

Լիբանանահայ կառույցներու նախաձեռնութեամբ Լիբանան այցելեցին եւ հանդիպումներ, զրոյցներ ունեցան ու դասախօսութիւններ ներկայացուցին հայրենի մշակութային գործիչներ, որոնց շարքին Հայաստանի կոմիտասի անուան երաժշտանոցի փոխ տնօրէն Արմէն Սմբատեան (պա իբրեւ մշակութային նախարար), Հայաստանի մշակութային փոխ նախարար Ստեփան Լուսիկեան, գրագէտ եւ թատերագիր Պերճ Զէյթունցեան, մտաւորական գործիչ Ռուբէն Յովսէփեան, մանկավարժ եւ գրական գործերու թարգմանիչ Արմէն Յովհաննիսեան, ակադեմիկոսներ Վլատիմիր Բարիսուղարեան եւ Լեւոն Հախվերդեան, բանաստեղծ Սասուն Գրիգորեան, դերասան Սօս Սարգսեան, դասախօսներ՝ Պետրոս Յովհաննիսեան, Սէյրան Գրիգորեան եւ Աբրահամ Ալիքեան, գեղանկարիչ Լաւրենթի Աղասեան, Հայաստանի Պետական պատկերասփիւռի վարիչ - տնօրէն Շահէն Խաչատրեան:

Նշեալ մտաւորականներու

կողքին տարբեր առիթներով Լիբանան այցելեցին հայրենի գրագէտներ Գէորգ Էմին, Հրանդ Մաթեոսեան, Սիլվա Կապուտիկեան եւ Ռազմիկ Դաւոյեան:

Լիբանանի մէջ հայրենի մշակութային գործիչներու այս ամփոփ թուարկումը չփակած պէտք է նշել, որ վերջին քանի մը տարիներուն լիբանանցի աշխարհահռչակ երգչուհի Ֆէյրուզ եւ Ռահպանի եղբայրները իրենց համերգներու ընթացքին յաճախ գործակցութեան կը հրահանգեն հայրենի երաժիշտներ եւ նուագախումբեր:

Հայաստան - լիբանանահայ գաղութ մշակութային կապերու կարեւոր իրադարձութիւններու հպանցիկ այս ակնարկէն ետք կարելի է կատարել հիմնական երկու եզրակացութիւն:

Առաջին՝ Հայաստան - լիբանանահայ գաղութ կապերը ընդհանրապէս եղած են միակողմանի՝ Հայաստանէն դէպի Լիբանան, բացի քանի մը բացառութենէ («Կարկաչ» եւ «Արեգ» մանկապատանեկան թատերախումբը):

Երկրորդ՝ Հայաստան - Լիբանան մշակութային կապերը ընդհանրապէս սահմանափակուած են Հայաստան - լիբանանահայ գաղութ մշակութային յարաբերութիւններով, բացի քանի մը բացառութենէ (լիբանանեան փառատօներ):

Հետեւաբար, հակառակ մշակութային մարզին մէջ Հայաստանի եւ լիբանանահայ գաղութին միջեւ երբեմն աշխուժ, երբեմն աւելի թոյլ, սակայն ընդհանրապէս միակողմանի կապերուն, Լիբանան - Հայաստան ուղղակի յարաբերութիւնները կը սպասեն իրենց սերտացման եւ զարգացման հանգրուանը, որուն մէջ, լիբանանահայ գաղութին կողքին, հիմնական դերակատարները պէտք է ըլլան երկու երկիրներու ղեսպանատուները եւ համապատասխան նախարարութիւնները:



Panasonic

42-inch

50-inch



Dazzling Wide Screen Entertainment. PLASMA [tau]

Exclusive Agents: TUTUNJIAN Corp. S.A. [04] 712129 / 130, 711967 [03] 243203 Fax: [04] 712177 E-mail: TTC@cyberia.net.lb